ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՌՈՄԻ ԿԱԹՈԼԻԿ ԵՎ ՀՆԴԻԿ ՄԱԼԱՆԿԱՐԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մյուռոնօրհնեքի առիթով Մայր Աթոռ ժամանած Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Արևելյան Եկեղեցիների Քահանայապետական Կոնգրեգացիայի պրեֆեկտ կարդինալ Լեոնարդո Սանդրիի և ուղեկցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի ու Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի: Հանդիպմանը ներկա էին նաև Զմմառի Կաթոլիկ հայոց Պատրիարքության ներկայացուցիչ Տ. Վարդան եպիսկոպոս Աշքարյանը և Մխիթարյան Միաբանություն վանահայր Հայր Եղիա Քիլաղպյանը:

Հրաժեշտի հանդիպմանը Վեհափառ Հայրապետը կարդինալ Սանդրիի միջոցով ի Քրիստոս իր ողջույններն ու շնորհակալությունը փոխանցեց Հռոմի Բենեդիկտոս ԺԶ Պապին՝ Հայոց Եկեղեցու հանդեպ ցուցաբերած եղբայրական սիրո ու հարգանքի համար:

Իր հերթին կարդինալ Լեոնարդո Սանդրին ուրախություն հայտնեց Հայ Առաքելական և Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա սերտ հարաբերությունների ու համագործակցության առիթով, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց Հայ Կաթողիկե Եկեղեցու նկատմամբ Հայոց Հայրապետի ուշադրության համար:

*

* *

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաև Հնդիկ Մալանկարա քույր Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Նորին Սրբազնություն դոկ. Թոմաս Աթանասիուս միտրոպոլիտի և ուղեկցությամբ հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վարդապետ Գյուլզյուլյանի:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Մյուռոնօրհնեքի սրբազան արարողությանը նրանց բերած կարևոր մասնակցության համար՝ նշելով, որ Մյուռոնօրհնեքը կարևոր առիթ է քրիստոնյաների համախմբման՝ ի նշան քրիստոնեական սիրո և եղբայրության:

Նորին Սրբությունն իր եղբայրական բարեմաղթանքները փոխանցեց Հնդիկ Մալանկարա Եկեղեցու Հովվապետին և անդրադարձավ առաջիկա նոյեմբերին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու 300-ամյակի առիթով Հնդկաստան կատարելիք Հայրապետական իր այցին, որի շրջանակներում նախատեսվում է նաև այցելություն Քերալա՝ Հնդիկ Մալանկարա Եկեղեցու հոգևոր կենտրոն:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը և գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՐԴԻՆԱԼ ԼԵՈՆԱՐԴՈ ՍԱՆԴՐԻ ԳԼԽԱՎՈՐՈՒՄ
ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹՈՒՄԱՍ ԱԹԱՆԱՍՈՒՍ ՄԻՏՐՊՈԼԻՏԻ ԳԼԽԱՎՈՐՈՒՄ
ՀՆԴԻԿ ՄԱԼԱՆԿԱՐԱ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԵՈՖՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՌԱՌԵԼԻ ԳԼԽԱՎՈՐՈՒՄ
ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՈՒԾԱՆՎԵՐՆԵՐ Է ՀԱՆՁՆՈՒՄ ՊԵՐԱՍԻՄ ՄԻՏՐՊՈԼԻՏ
ԳԼԽԱՎՈՐՈՒՄ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ